«Հայաստանում նպատակային բնապահպանական պետական սուբվենցիաների արդյունավետության մասնակցային գնահատում»

Բնապահպանական սուբվենցիաների վերաբերյալ օրենսդրության, նորմատիվային փաստաթղթերի և ընթացակարգերի արդյունավետության գնահատում և դրանց կատարելագործման առաջարկություններ

Սույն փաստաթուղթը ստեղծվել է Եվրոպական Միության աջակցությամբ՝ «Հզորացման գործընկերներ» ծրագրի շրջանակներում: Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատվությունը ամբողջությամբ կրում է «Խազեր» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպությունը, որը ներգրավված է «Հզորացման գործընկերներ» ծրագրում, և ոչ մի դեպքում չի կարող համարվել, որ այն արտացոլում է Եվրոպական Միության տեսակետը:

Համայնքներին բնապահպանական սուբվենցիաների տրամադրման կարգը սահմանված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

1. Օրենքով (հոդված 1) թվարկվում են կոնկրետ ընկերություններ, որոնք թողնում են վնասակար ազդեցություն ազդակիր համայնքների վրա:

Հարց է առաջանում, ինչու է նշվում ընկերությունը, այլ ոչ յուրաքանչյուր ներգործության իրականացնողը: Չէ՞ որ ընկերությունները կարող են փակվել, նորերը բացվել: Ինչ է, յուրաքանչյուր դեպքում «օրենքը» պետք է փոփոխվի՞: Կամ ընկերությունը, որը ոչ մեծ ազդեցություն է ունեցել, չի ընդգրկվել, կարող է ընդլայնվել, սակայն ընդգրկված չլինելով այդ ցանկում ազդակիր համայնքը կմնա առանց փոխհատուցման:

<u>Առաջարկ</u> – օրենքում կատարել փոփոխություն ու ընկերությունների թվարկման փոխարեն նշել «բոլոր բնապահպանական հարկ վճարողները»:

Դա արդարացված է նրանով, որ չի կարող լինել դեպք, որ այդ բոլոր ընկերությունները չթողնեն վնասակար ազդեցություն համայնքների վրա իրենց արտանետումների չափով:

Նույն հոդվածով (վերջին պարբերություն) սահմանված է, որ.

ա/ միայն ամրակայված աղբյուրներից արտանետումների դիմաց վճարումներից են կատարվում մասհանումներ:

<u>Հարց</u>- իսկ ինչու միայն «ամրակայված»: Չե՞ որ, օրինակ, Երևանում օդային ավազանի աղտոտումը պայմանավորված է հիմնականում (ոչ պակաս 80%) շարժական աղբյուրներից արտանետումներով, և դրա համար այդ աղբյուրների տերերը վճարում են բնապահպանական վճար:

<u>Առաջարկ</u> – օրենքում «ամրակայված» բառից հետո ավելացնել «և շարժական» բառը և շարժական աղբյուրներից հավաքագրվող գումարից սուբվենցիան հատկացնել բոլոր համայնքներին ըստ բնակչության թվի:

բ/ Թափոնների մասով սահմանված է «արտադրության ու սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման համար սահմանված բնապահպանական վճարներից»,

Հարց: Ինչու միայն «սահմանված կարգով տեղադրման համար»: Իսկ եթե ոչ սահմանված կարգով է տեղադրված, որի ականատեսն ենք...
Օրինակ, մթնոլորտ արտանետումների մասով գերնորմատիվային արտանետումների համար համապատասխան «պատիկներով» ընկերությունները վճարում են, ինչու՞ թափոնների «ոչ սահմանված կարգով» տեղադրված թափոնների համար մասհանումներ չպետք է կատարվեն ազդակիր համայնքներին:
Առաջարկ - «սահմանված կարգով» բառերը հանել:

Հոդված 2 – նշված է «մասհանումները օգտագործվում են բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար»:
Սակայն, 3-րդ հոդվածի ա) կետում բացի բնապահպանականի ավելացված է նաև «շրջակա միջավայրի պահպանությունը» բառերը, իսկ բ/ կետում՝ նաև առողջապահական բաղադրիչը:
Քանի դեռ հիմքեր չկան համեմատելու համար այդ երկու ուղղությամբ վնասների օբյեկտիվ գնահատման համար, ***նպատակահարմար է ուղղում մտցնել օրենքում ու բաշխումը «առողջապահականի» ու «բնապահպանականի» միջև կատարել 50/50 հարաբերակցությամբ:***

3-րդ հոդվածի գ) կետի բովանդակությունն անհասկանալի է: Ի՞նչ է հասկացվում «Ծրագիրը ներառնում է՝ ծրագրային միջոցառումների իրականացման առաջնայնությունները.....»:
Առաջարկ. 3-րդ հոդվածի գ) կետը օրենքից հանել:

3-րդ հոդվածում նշված է, որ իրավաբանական և ֆիզիկական այլ անձինք կարող են Ծրագրի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկ ներկայացնել համայնքի ղեկավարին, սակայն չի նշվում այդ առաջարկի հետևանքը, այսինքն, դրա հետագա քննարկման ընթացքը:
Առաջարկ. Սահմանել հասարակական քննարկումների ընթացակարգը՝ իր հետևանքով:

Իրավունքի տեսակետից անընդունելի է Ծրագրում ներառնել միջոցառումներ, որոնք պայմանավորված են ընկերությունների գործունեության արդյունքում առաջացած վնասների վերացմանը (կետ ա):
Դա հակատրամաբանական է, քանի որ ընկերությունն է պարտավոր չվնասել միջավայրը, և վնասի վերացումը իր պարտավորությունն է, այլ ոչ ազդակիր համայնքինը:
Առաջարկվում է «ընկերությունների գործունեությամբ պայմանավորված» բառերը հանել:

Մեկ այլ խնդիր են բնապահպանական և բնօգտագործման դրույքաչափերը, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:
Դրանք բոլորը, ըստ էության, կամայական են սահմանված, չեն հիմնավորված բնապահպանական տեսանկյունից ու նշանակությամբ:
Դրա վառ օրինակն է շարժական աղբյուրներից..... դրույքաչափերը, որոնք ընդհանրապես կապ չունեն արտանետումների հետ, այլ պարզապես իրենցից ներկայացնում են գույքահարկ, քանի որ սահմանված են ըստ մեքենայի շարժիչի հզորության ու անկախ նրանից մեքենան օգտագործվում է, թե ոչ:
Առաջարկվում է

1. ***Վերանայել դրույքաչափերը, նկատի ունենալով, որ դրանք նպաստեն ընկերությունների կողմից պատճառվող վնասը պակասեցնելուն (որպես տնտեսական խթան)***

2. *Վնասի հատուցման սկզբունքներն ու դրույքաչափերը համապատասխանեցնել միջավայրի ու մարդկանց առողջության վրա ներգործության աստիճանին*
3. *Շարժական աղբյուրներից արտանետումների դիմաց վճարումները սահմանել ըստ օգտագործած վառելիքի ու դրանց տեսակի ու վճարումը մտցնել վառելիքի սպառման գնի մեջ:*

Սկզբունքային հարց է նաև նախկինում ընդունված «բնապահպանական վճար»-ի վերանվանելը «բնապահպանական հարկ»-ի : Այսինքն մարդու կրած վնասը համարել հարկ ու որպես այդպիսին տանել բյուջե որպես հարկատեսակ:

<u>Անհրաժեշտ է</u> բնապահպանական վճարը դուրս բերել հարկման դաշտից վերադառնալ նախկին՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքին, իհարկե, կատարելագործելով այն:

<u>Ընդհանրապես նպատակահարմար է</u> պետական բյուջե մուծվող բնապահպանական վճարները (ներկայումս՝ հարկերը) ամբողջ ծավալով տրամադրել համայնքներին, բաշխելով դրանք ըստ ազդեցության գոտիների (բնապահպանական բաղադրիչը), իսկ առողջապահական բաղադրիչը ըստ այդ գոտիներում բնակչության թվի: